ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հոկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

150
(2816)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ՄԱՄՈՒԼԻ



Ազատ խոսքի, ազատ մամուլի դեմ պայքարը Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հետեւողականորեն առաջ է տանում: Երեւանցիների 9 տոկոս ձայներով ընտրված՝ իշխող կուսակցության քաղաքապետի երդմնակալությունը առանց լրագրողների կազմակերպելուց հետո քաղաքային իշխանության ներկայացուցիչը հարձակվել է «Ժողովուրդ» օրաթերթի վրա: Նախօրեին տեղեկացանք, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը սեպտեմբերի 27-ին դիմել է ՀՀ վարչական դատարան եւ «Ժողովուրդ» օրաթերթից պահանջել հրապարակային ներողություն խնդրելու, զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու, ինչպես նաեւ փոխհատուցում վճարելու մասին վճիռ կայացնել: Հայցվոր կողմը պահանջել է նաեւ ««Ժողովուրդ» թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի գույքի վրա 3 միլիոն դրամի չափով արգելանք դնել: Երեւան քաղաքի քաղաքացիական դատարանի դատավոր Էդուարդ Ամալյանը հոկտեմբերի 6-ին գործն ընդունել է վարույթ, կայացրել է որոշում՝ օրաթերթի գույքի վրա արգելանք դնելու մասին: Ընդգծենք, որ Ղուկասյանի կողմից դատի տալու, գործը վարույթ ընդունելու եւ միջնորդությունը մասնակի բավարարելու գործընթացից լրատվամիջոցը տեղյակ չի եղել, որեւէ ծանուցում չի ստացել: Միայն հոկտեմբերի 20-ին հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից գրություն ենք ստացել, որ հոկտեմբերի 17-ին հարկադիր կատարող Ս. Միրզիկյանը որոշում է կայացրել կատարողական վարույթի գույքի վրա 3 մլն դրամի չափով արգելանք դնելու վերաբերյալ: Տեղեկացնենք նաեւ, որ մինչ դատարան դիմելը թաղապետ Ղուկասյանը պաշտոնական որեւէ գրություն չի ուղարկել լրատվամիջոցին հերքման պահանջի մասին, ինչը օրենսդրական պահանջ է: Իսկ ո՞ր հրապարակումն է դարձել դատական վեճի առարկա. 2023 թվականի սեպտեմբերի 2-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կենտրոն համայնքի ղեկավար Սամվել Ղուկասյանը, ավագանու ընտրություններին ընդառաջ, անթաքույց «կաշառք» է առաջարկում երեւանցիներին: Նախ՝ ընգծենք, որ նա ընդգրկված է ՔՊ-ի ավագանու ցուցակում, եւ արդեն մի քանի օր է, ինչ, քարոզարշավի մեկնարկին զուգահեռ, Կենտրոն վարչական շրջանի էջով գովազդում է, թե ճանապարհների եւ բակերի նորոգումներ են արվել, խաղահրապարակներ են կառուցվել, եւ այս բնույթի տարատեսակ «գայթակղիչ» խոստումներ ու գովազդներ: Նկատենք, որ մինչ քարոզարշավը թաղապետ Ղուկասյանը միայն աչքի է ընկել իր անգործությամբ, բայց քարոզարշավի օրերին ակտիվացել է, հիշել է իր պարտականությունների ու երեւանցիների խնդիրների մասին: Կենտրոն վարչական շրջանի էջն էլ ակտիվ լուսաբանում ու մեծ շուքով ներկայացնում է կոնկրետ աշխատանքները: Այսպես, երեկ շատ «ճոխ» ներկայացրել են, որ Երեւանի կենտրոնում գտնվող շենքերից մեկի բակն են բարեկարգել, խաղահրապարակ կառուցել կամ Հյուսիսային պողոտայում նոր աղբամաններ տեղադրել: ԿԸՀ-ից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել էր՝ արդյոք չեն արձանագրել Կենտրոնի թաղապետի կողմից թույլ տրված ընտրախախտումները եւ ընտրակաշառքի ակնհայտ դեպքերը: ԿԸՀ ՔՊ-ական նախագահը խախտում չէր տեսել, բնականաբար: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից արված քայլը, դատավոր Էդուարդ Ամարյանի որոշումը «Ժողովուրդ» օրաթերթը դիտարկում է խոսքի ազատության նկատմամբ ուղղակի ճնշում եւ դատական բոլոր ատյաններում պայքարելու է ազատ խոսքի իր անքակտելի իրավունքի իրացման համար: Իշխանության որեւէ ներկայացուցիչ, առավել եւս՝ զավեշտալի ու քրեական պատմություններով հայտնի Կենտրոնի թաղապետը, իր ագրեսիվ վարքով մեզ չի կարող հետ պահել հետագա հրապարակումներից:

Երեւանցիների 9 տոկոս ձայներով ՔՊ-ն, մայրաքաղաք Երեւանում իշխանություն վերցնելով, խրվել է կոռուպցիայի մեջ: Այդ մասին են վկայում հենց պաշտոնական տեղեկությունները: Հայտնի է, որ 87 մլն 318 հազար ՀՀ դրամ կամ մոտ 220 հազար ԱՄՆ դոլար է ծախսվել Երեւանի քաղաքապետի երդմնակալության համար: Այն, որ ծախսված աստղաբաշխական թվերը դարձել են ամենաքննարկվող թեման մեր երկրում, բնական է, քանի որ պատմական ռեկորդ էր այդքան գումար ծախսելը արարողակարգային մի միջոցառման վրա: Քաղաքապետարանից մեզ տեղեկացրին, որ միջոցառման կազմակերպիչը եւ պատասխանատուն Շավարշ Գրիգորյանն է՝ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի քարտուղարը եւ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում ուղարկեց Երեւանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել տեղեկություն, թե նախկին քաղաքապետ, նախկին հեղափոխական Հայկ Մարությանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 13-ի երդմնակալության արարողության համար որքան գումար է տրամադրվել, եւ ինչպես է ծախսվել գումարը: Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը բավականին օպերատիվ պատասխանել է մեր հարցմանը՝ տեղեկացնելով՝ Հայկ Մարությանի երդմնակալության համար համայնքային բյուջեից ծախսվել է 900 հազար ՀՀ դրամ հյուրասիրության համար: Թվերն, իհարկե, անհամեմատելի են. նույն միջոցառումը 2018-ին կազմակերպել է Հայկ Մարությանը՝ ծախսելով 900 հազար ՀՀ դրամ, իսկ գործող քաղաքապետի երդման համար համայնքային բյուջեից 87 մլն 318 հազար ՀՀ դրամ է ծախսվել:

Նիկոլ Փաշինյանը հաճախ է նախարարներին եւ տեղակալներին տարբեր որոշումներով ոլորտից ոլորտ տեղափոխում: Նման մի օրինակ է նաեւ Տիգրան Գաբրիելյանի դեպքում: 2022 թվականի հունիսի 24-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալից նա դարձավ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ: Մեկ այլ այդպիսի որոշմամբ էլ Գաբրիելյանը գյուղատնտեսության նախարարի տեղակալից դարձել էր էկոնոմիկայի նախարարի տեղակալ: Իսկ ո՞վ է այդ գերմարդկային կարողություններով օժտված պաշտոնյան եւ ի՞նչ ունեցվածք ունի: Գաբրիելյանը հայտարարագրել է 1 բնակարան բազմաբնակելի շենքում, որը գնվել է 2011 թվականին Երեւանի Էրեբունի վարչական շրջանում: Զարմանալի է այն հանգամանքը, որ փոխնախարարն իր պաշտոնավարումների ընթացքում երբեք տրանսպորտային միջոց չի հայտարարագրել. երեւի պատճառն այն է, որ Գաբրիելյանը միշտ ծառայողական մեքենայով է շրջում: 2018 թվականին, երբ Գաբրիելյանը նոր էր սկսել իր՝ փոխնախարարի կարիերան, նրա դրամական միջոցները կազմել էին 73 հազար ԱՄՆ դոլար եւ 5 մլն 300 հազար դրամ: Այժմ՝ գրեթե 5 տարի անց, փոխնախարարի դրամական միջոցները անգերազանցելիորեն աճել են. բանկային ավանդները կազմել են 68 հազար դոլար, բանկային հաշիվների մնացորդները 11 մլն 438 հազար դրամ եւ 168 դոլար, կանխիկ դրամական միջոցները կազմել են 12 հազար դոլար: Գաբրիելյանի տարեկան եկամուտները 2018 թվականին կազմել են 2 մլն 544 հազար դրամ, իսկ 2023 թվականին ներկայացրած հայտարարագրում փոխնախարարի եկամուտները աճել են գրեթե 7 անգամ՝ դառնալով 15 մլն 972 հազար դրամ: Ամուսինը մեքենա չունի, սակայն կինը՝ Գոհար Գինոսյանը, 2018 թվականին գնել է Lexus մակնիշի մեքենա՝ արտադրված 2006 թվականին: Գինոսյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 56 հազար դրամ: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 2 մլն 111 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է «Հանրապետական անասնաբուժասանիտարական եւ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ից, որտեղ աշխատում է որպես գլխավոր մասնագետ:

Երեկ խորհրդարանը գումարել էր իր հերթական նստաշրջանը. ի թիվս այլ հարցերի՝ օրակարգում էր նաեւ Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի ընտրության հարցը: Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել է Դավիթ Խաչատուրյանի, Անահիտ Հակոբյանի եւ Մանվել Շահվերդյանի թեկնածությունները: Դատավորների ընտրության քվեարկությունը, սակայն, երեկ չկայացավ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քվեարկությունը տեղի չի ունեցել ՔՊ-ական պատգամավորների բացակայության պատճառով: Բանն այն է, որ իշխանականներն իրենց սիրելի գործին են՝ պետբյուջեի հաշվին գործուղումների են: Սա է պատճառը, որ դատավորների ընտրության քվեարկությունը հետաձգվել է, որպեսզի իշխանականները վերադառնան գործուղումներից, դատավորների ընտրությունը կայանա, չտապալվի: Տեղեկացանք, որ այս օրերին գործուղումների են Հակոբ Արշակյանը, ՔՊ-ականներ Ծովինար Վարդանյանը եւ Արսեն Թորոսյանը (Անգլիա), Արուսյակ Ջուլհակյանը եւ Վահագն Ալեքսանյանը (Շվեդիա), Ռուբեն Ռուբինյանը (Իրան):

ԶՐՈՒՅՑ

ՄԵԾ ԾԱԽՍԵՐ՝ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Ավագանու «Քաղաքացիական դայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է Տիգրան Ավինյանի երդմնակալության համար 87 միլիոն դրամից ավելին հատկացնելուն, ավագանիում «Հանրային ձայն»-ի, Հայկ Մարությանի եւ Զարուհի Փոստանջյանի հետ աշխատելուն, ինչպես նաեւ Երեւանում առկա խնդիրների լուծմանը:

-Նախ սկսենք վերջերս մեծ աղմուկ բարձրացրած հարցից. քաղաքապետարանը պաշտոնապես հայտարարեց, որ Տիգրան Ավինյանի երդմնակալության համար շուրջ 87 միլիոն դրամ է հատկացվել: Պարոն Գալջյան, այս պայմաններում, երբ տեղահանված արցախցիների մի մասի հարցը դեռ լուծված չէ, մայրաքաղաքում եւս շատ առաջնահերթ խնդիրներ կան, որքանո՞վ է պատեհ նման մեծ ծախսեր անելը երդմնակալության համար, որը ընդամենը մի քանի ժամ է տեւել:

-Նախ պետք է նշել, որ Ձեր հարցի կապակցությամբ արցախցիների կարիքների հոգման համար պետությունը անհրաժեշտ բոլոր միջոցները կիրառում է եւ ֆինանսական մեծ միջոցներ է տրամադրել, արդեն շուրջ 100 միլիոն դոլարի կարգի դուրս է գրվել, եւ մենք չենք տեսնում առնվազն զանգվածային բողոքի ալիք, որ իրենց հարցերը պետությունը չի հոգում: Իհարկե, կան խնդիրներ նաեւ. բնականաբար, 100000 մարդու մուտքը Հայաստան չէր կարող առանց խնդիրների անցնել, բայց, ըստ էության, հիմնական խնդիրները պետությունը հոգում է, եւ եթե ասենք, որ պետական բյուջեում գումար չկա, եւ պետք է ստիպված միայն առաջին անհրաժեշտության կարեւոր ծախսերն անենք, ես կհասկանայի: Վերջին տարիներին թե՛ պետական բյուջեի եկամուտների աճը, թե՛ համայնքային բյուջեի եկամուտների աճը թույլ է տալիս, որ համայնքը եւ պետությունը հավուր պատշաճի միջոցառումներ իրականացնեն պետական մակարդակի հարցերում, արարողակարգային հարցերում եւ միեւնույն ժամանակ հոգալ մեր քաղաքացիների, հայրենակիցների սոցիալական հարցերը:

Ինչ վերաբերում է 87 միլիոնին, պետք է նշեմ, որ 14 միլիոնը հարկ է, այսինքն՝ պետական բյուջե է մուտքագրվել, իսկ մնացած մոտ 70 միլիոնի 50 տոկոսին արվել են այնպիսի ծախսեր, որոնք մնայուն են, այսինքն՝ արվել են այնպիսի ծախսեր, գնվել են այնպիսի դեկորացիաներ, որոնք հետագա տարիներին Երեւանի քաղաքապետարանը կարող է օգտագործել եւ կրկին նոր ծախս չի նախատեսի: Այս առումով ես կարեւորում եմ, որ Երեւանի քաղաքապետի երդմնակալության արարողությունը, անկախ նրանից, թե ով է քաղաքապետը, անկախ անձից, մեր քաղաքի պատմության մի մասն է: Եթե մենք, պատմություն ասելով, նկատի ունենք անցյալը, պետք է հասկանանք, որ այսօր մեր գործողությունները կարող են դառնալ պատմության մի մաս, եւ մեր ապագա սերունդները նայելու են՝ տեսնեն, թե ինչ է եղել նախկինում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ԿԶԲԱՂՎԻ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված՝ Արցախի նախկին գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանը, ՀՀ փաստաբանական պալատի կողմից 2021թ. ստացած արտոնագրի հիման վրա, սկսել է զբաղվել փաստաբանությամբ:

Հետաքրքրական է, որ Գուրգեն Ներսիսյանն աշխատանքի է անցել LSA փաստաբանական գրասենյակում (https://legalservices.am), որը պատկանում է նախկին դատավոր Արսեն Սարդարյանին: Մեր տեղեկություններով՝ Արսեն Սարդարյանը մի քանի տարի աշխատել է դատական համակարգում, այդ թվում՝ Արցախում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Գուրգեն Ներսիսյանի հետ, որը հաստատեց լուրը եւ հայտնեց, որ փաստաբանությամբ զբաղվել էր նաեւ 2020թ.՝ Արցախի Հանրապետության դատախազության համակարգից դուրս գալուց հետո, սակայն այն ընդհատվել էր 2020թ. 44-օրյա պատերազմի պատճառով:

Մեր այն հարցին, թե, նոր գործունեությամբ պայմանավորված, կան արդյոք Ադրբեջանի կողմից գերեվարված Արցախի նախկին նախագահներին իրավաբանական աջակցություն ցուցաբերելու ծրագրեր, Գուրգեն Ներսիսյանը հայտնեց, որ այդ գործընթացին անմիջականորեն ներգրավվելու մի շարք խոչընդոտներ կան. «Բայց իմ մասնագիտական եւ գործնական հնարավորությունների սահմաններում որոշակի աջակցող աշխատանքներ կատարելու նպատակներ ունեմ, ընդ որում՝ դա վերաբերում է ոչ միայն նախկին նախագահներին, այլեւ Ստեփանակերտում կամ ՀՀ տեղափոխվելիս ձերբակալված մյուսներին: Հասկանալի պատճառներով զերծ կմնամ այդ անելիքների մասին հրապարակային խոսելուց»:

ՍՈՆԱ ԳՈՒԳՈՐՅԱՆ

ԿՈՉ Է ԱՐԵԼ

Քաթարի էմիր շեյխ Թամիմ բեն Համադ Ալ Թանին կոչ է արել դադարեցնել զինված հակամարտությունը Իսրայելի եւ արմատական պաղեստինյան «ՀԱՄԱՍ» շարժման միջեւ, որը սպանում է խաղաղ բնակիչներին: Նա համապատասխան հայտարարություն է արել՝ ելույթ ունենալով Խորհրդատվական խորհրդի (Միապալատ խորհրդարան) 52-րդ նստաշրջանի բացմանը:

«Անմեղ մարդկանց սպանությունն անընդունելի է՝ անկախ նրանից, թե նրանք ինչ ազգության են, եւ որ կողմն է հարվածողը: Մենք տարածաշրջանի երկրներին եւ աշխարհին կոչ ենք անում ամուր դիրքորոշվել այս սրման դեմ, որը սպառնում է Մերձավոր Արեւելքի եւ Մերձավորարեւելյան անվտանգությանը: Մենք նաեւ կոչ ենք անում դադարեցնել այս պատերազմը, որն արդեն դուրս է եկել բոլոր հնարավոր սահմաններից»,- ասել է էմիրը:

«Մենք ցանկանում ենք հարցնել նրանց, ովքեր կանգնած են այս պատերազմի հետեւում եւ չեն ընդունում այլընտրանքային սցենարներ: Ի՞նչ կլինի դրանից հետո: Կլինի՞ խաղաղություն եւ անվտանգություն եւ՛ իսրայելցիների, եւ՛ պաղեստինցիների համար: Ո՞ւր են գնալու պաղեստինցիները պատերազմից հետո: Պաղեստինի ժողովուրդը մնում է, եւ նրա հետ մնում է նրա տառապանքը: Այս պատերազմից հետո մենք միայն վիշտ ենք ստանալու, աճող զոհեր եւ դրա հետ կապված անարդարության խոր զգացում»,- հավելել է էմիրը:

«Երկու ժողովուրդների կայունությունն ու անվտանգությունը երաշխավորելու միակ ճանապարհը արդար եւ կայուն խաղաղություն հաստատելն է եւ Պաղեստինի ժողովրդին հնարավորություն տալը իրականացնելու իր բոլոր օրինական իրավունքները, ինչպես սահմանված են միջազգային կազմակերպությունների կողմից, մասնավորապես՝ սեփական պետություն ստեղծելու իրավունքը»,- ընդգծել է Քաթարի ղեկավարը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳԸ

Շուրջ մեկամսյա դադարից հետո ՔՊ-ականները ուրբաթ օրը վարչության նիստ են արել՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ փակ նիստից: Չնայած որ Արցախը կորսված է, իսկ Հայաստանը՝ նոր պատերազմի շեմին, Փաշինյանի ու ՔՊ-ականների համար առաջնային խնդիր մնում է իշխանության պահպանման հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը վարչության նիստում իր թիմակիցներին ասել է, թե հիմա էլ ռուսներն են ուզում իրենից իշխանություն վերցնել, ուստի պետք է իշխանության պահպանման համար կոշտ ու հստակ քայլեր ձեռնարկել: Բանն այն է, որ Փաշինյանն էլ շատ լավ հասկանում է, որ իր իշխանության հակառուսական քայլերն անհետեւանք չեն կարող մնալ, եւ իրենց վարած անկայուն արտաքին քաղաքականության հետեւանքով ՌԴ-ն այլեւս Հայաստանին վստահելի գործընկեր չի համարում, ցանկանում է՝ Հայաստանում իշխանության փոփոխություն տեղի ունենա: Այսպիսով, Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցներին հրահանգել է առաջին հերթին գործի դնել իրենց հիմնական զենքը, այն է՝ պառակտել եւ խժդժություններ մտցնել հանրության մեջ: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի արցախցիները շարունակեն այստեղ ակցիաներ իրականացնել, Հայաստանի իշխանություններից եւ իրավապահ մարմիններից իբրեւ արցախցի պահանջեն «թալանչիների» դեմ պայքար սկսել, Արցախի նախկին երեք նախագահներից արդարություն պահանջեն: Այլ կերպ ասած, Փաշինյանն ամեն գնով ցանկանում է հասնել Արցախի ղեկավարության հեղինակազրկմանը: Առաջնային թիրախում Սամվել Շահրամանյանն է. պետք է ամեն ինչ անել, որպեսզի դժգոհության սլաքները ուղղվեն դեպի Շահրամանյանը: Փաշինյանն այսքանով, սակայն, չի ցանկանում սահմանափակվել: ՔՊ-ականներին նա հրահանգել է, որպեսզի հայ հանրության մեջ խորացնեն հակառուսական տրամադրությունները, ամեն հնարավոր միջոցներով հայտարարեն, թե նախկինները ուզում են հետ գալ Ռուսաստանի օգնությամբ: Իր այս ծրագրերին հասնելու համար նա հրահանգել է գործի դնել ողջ ռեսուրսները՝ «ֆեյքեր», արեւմտամետներ, պատգամավորներ, ու ցանկացած հարթակով այս թեզերը առաջ տանել: Հիմա էլ արդեն իշխանական պատգամավորները իրենց տրամադրության տակ գտնվող մեդիառեսուրսներով սկսել են աշխատանքները, որին նաեւ Սամվել Բաբայանն է իր փոքրաթիվ թիմով միացել: Տեսնենք՝ ինչ կստացվի:

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԻՆ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Երեւան համայնքի ղեկավարից ստացել է ավագանու անդամների լիազորությունները վաղաժամ դադարեցնելու 2 արձանագրություն: Հանձնաժողովը հոկտեմբերի 24-ի հերթական նիստում քննարկել է դրանք. այս մասին տեղեկացրին ԿԸՀ-ից:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Սուրեն Գրիգորյանը եւ «Հանրապետություն» խմբակցության անդամ Սարգիս Մադաթյանն ինքնաբացարկի դիմումներ են ներկայացրել համայնքի ղեկավարին:

Լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Լեւոն Գագիկի Լեւոնյանին եւ «Հանրապետություն» կուսակցության ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Միեր Աշոտի Բեջանյանին:

Հավելենք, որ ինքնաբացարկ հայտնած անձինք համարվում են փոխքաղաքապետերի թեկնածուներ:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՈՒ ՄԵՐԺՎԵ՞Լ Է

Որեւէ մեկին որեւէ պաշտոնում նշանակելու առաջարկ անելու համար նախ այդ թեկնածուն անցնում է հայկական ընթացակարգով. այս մասին հոկտեմբերի 24-ին Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ասաց ՔՊ-ական պատգամավոր Գուրգեն Արսենյանը՝ անդրադառնալով ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան նշանակվելու առաջարկին:

«Ո՞նց եք կարծում, առանց ինձ առաջարկ անելու, գաղտնի իմ թեկնածությունն ուղարկել են Ռուսաստանի Դաշնություն, որից հետո ՌԴ-ն եթե ասի՝ ես համաձայն եմ, նոր ես պետք է որոշեմ՝ գնալու եմ, թե ո՞չ»,-ասաց նա:

Հարցին՝ արդյոք գնալու է դեսպան աշխատելու, Արսենյանը պատասխանեց. «Եթե դուք ընդունվել եք ինստիտուտ, փաստաթղթերը տվել եք, քննությունները հանձնել եք, դուք այդ ինստիտուտում սովորելո՞ւ եք, թե՞ չէ: Այդ հարցն եք տալիս մոտավորապես»:

Ճշտող հարցին՝ դեսպան նշանակվելու առաջարկ արվել է արդյոք, պատգամավորն արձագանքեց. «Ոնց կարող է առաջարկ չարվի, եթե իմ փաստաթղթերն այս պահին գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում»:

Գուրգեն Արսենյանը ապատեղեկատվություն որակեց այն լուրը, թե ՌԴ-ն մերժել է իր թեկնածությունը այդ երկրում նոր դեսպանի պաշտոնում: «Չունեմ պարզաբանում, որովհետեւ ապատեղեկատվության պարզաբանումով ես չեմ զբաղվում»,- ասաց նա:

Նշենք, որ «Իրավունք» թերթն երեկ գրել էր, որ Հայաստանի իշխանությունները որոշել են փոխել Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Վաղարշակ Հարությունյանին: Ըստ պարբերականի՝ Ռուսաստանը, սակայն, մերժել է խորհրդարանի գործող պատգամավոր Գուրգեն Արսենյանի թեկնածությունը նոր դեսպանի պաշտոնում:

ԲԱՑԱՌԻԿ

ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները մեզ են փոխանցել մի բացառիկ ձայնագրություն, որը կատարվել էr 2023թ. օգոստոսի 4-ին: Այնտեղ Արցախի նախագահի գլխավորությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Սամվել Բաբայանը կտրուկ դեմ է արտահայտվում Աղդամի ճանապարհը բացելուն եւ կողմ արտահայտվում շարունակաբար դիմանալու մոտեցմանը: Ինչպես միշտ, Սամվել Բաբայանը հրապարակային այլ բան է խոսել, ներսում՝ այլ:

Հենց ձայնագրության օրվա նիստից հետո Բաբայանը քննադատում էր իշխանություններին եւ առաջ քաշում այն տեսակետը, որ պետք է բանակցել ադրբեջանական կողմի հետ, բացել ճանապարհները: Իսկ երբ իշխանական շրջանում սկսում էին շրջանառվել Ադրբեջանի հետ հանդիպման կամ Աղդամի ճանապարհը բացելու մասին կարծիքներ, Սամվել Բաբայանն ու նրա թիմակիցները սկսում էին ամենակեղտոտ քննադատությունները հնչեցնել իշխանությունների հասցեին:

Տեղի ունեցած իրադարձությունների եւ ձայնագրությունում տեղ գտած խոսակցության համադրությունից պարզ է դառնում, որ նույնիսկ շրջափակման ընթացքում Արցախում ընթանում էր իշխանության կռիվ, որի ընթացքում ոմանք պատրաստ էին նույնիսկ վնաս հասցնել Արցախի շահերին: Դա էր պատճառը, որ երբ Արցախի նորընտիր իշխանությունները որոշեցին բացել Աղդամի ճանապարհը, Սամվել Բաբայանն ու նրա թիմակիցները զարմանալիորեն նորից սկսեցին քննադատել իշխանություններին, թեեւ նրանք անում էին այն, ինչի ջատագովն էին նույն «Միասնական Հայրենիք»-ն ու հայաստանյան կառավարման տակ գտնվողները:

Իրականում, սակայն, խնդիրը նրանց՝ իշխանության գալու միակ թեզի ոչնչացման մեջ էր: Ի վերջո, ժողովուրդը հոգնել էր շրջափակման հետեւանքով ստեղծված վիճակից, եւ այդ պահին կարող էր իշխանության գալ միայն այն անձը, որը պատրաստ էր զիջումների հաշվին բացել ճանապարհները, ուղիղ բանակցել Ադրբեջանի հետ, ինչը թուլացած ժողովրդին կտար շնչելու, սնունդ, դեղորայք, վառելիք ձեռք բերելու հնարավորություն, իսկ իշխանությունների կողմից այդ քայլին գնալը փակում էր Սամվել Բաբայանի բոլոր ճանապարհները:

Իշխանության համար կռվողներից բարձր գտնվեց միայն Ադրբեջանը, որը լուռ հետեւում էր այդ ամենին ու զարմանում նրա վրա, թե ինչպես են իշխանատենչ այդ սուբյեկտները կարծում, որ Աղդամի ճանապարհը բացվելուց հետո խնդիրները կհամարվեն լուծված, եւ արցախահայությունը կվերադառնա մինչբլոկադյան կյանքին: Չէր լինելու այլեւս դա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

Իսրայելի նախագահ Իսահակ Հերցոգը հայտարարել է, որ պաղեստինյան «ՀԱՄԱՍ» շարժումը պատանդ է պահում 30 երեխայի: Այս մասին նա հայտարարել է իր ֆրանսիացի գործընկեր Էմանուել Մակրոնի հետ հանդիպման ժամանակ:

«30 երեխա առեւանգվել է «ՀԱՄԱՍ»-ի ահաբեկիչների կողմից»,- ասել է Իսրայելի նախագահը:

Խոսելով առեւանգվածների ազատ արձակման մասին՝ Հերցոգն ընդգծել է, որ «ոչ մի տարբերություն չկա Իսրայելի քաղաքացիություն ունեցող քաղաքացիների կամ այլ քաղաքացիություն ունեցողների միջեւ: Ի վերջո, յուրաքանչյուր իսրայելցի իսրայելցի է, եւ մենք ցանկանում ենք, որ նրանք վերադառնան որքան հնարավոր է շուտ»:

ՀԱՅ–ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Նոյեմբերի 13-ին կայանալիք ԵՄ ԱԳ նախարարների հաջորդ հանդիպման քննարկման թեման լինելու է հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցը: Այս մասին հայտարարություն է տարածել Եվրոպական հանձնաժողովը:

Նշվում է, որ ժամանակային սահմանափակումների պատճառով նախկինում օրակարգում ընդգրկված այս հարցը չի քննարկվել հոկտեմբերի 23-ի նախարարների հանդիպմանը:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների մասին քննարկումներ կլինեն երկուշաբթի՝ հոկտեմբերի 23-ին, որը Լյուքսեմբուրգում կայանալիք Արտաքին հարաբերությունների խորհրդի օրակարգային կարեւոր հարցերից մեկն է:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ Է ՏՎԵԼ

Հոկտեմբերի 23-ին ՀՀ երրորդ նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀԿ գործադիր մարմնի հերթական նիստը:

Նիստին քննարկվել է Հայաստանի իշխանությունների կողմից Արցախի հանձնմամբ եւ Ադրբեջանի կողմից ցեղասպանական գործողությունների հետեւանքով երկրում ստեղծված սոցիալական ու քաղաքական վիճակը:

Անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական զարգացումներին:

Իրականացվել է կատարված աշխատանքների վերլուծություն, բացթողումների եւ թերացումների վերհանում, որոնց հետ կապված՝ տրվել են հասցեական հանձարարականներ:

Նախագահ Սարգսյանի կողմից տրվել են հանձնարարականներ նաեւ ներկուսակցական աշխատանքների կազմակերպման եւ իրագործման վերաբերյալ:

Քննարկվել են նաեւ Հայաստանում քաղբանտարկյալների, ինչպես նաեւ Բաքվի բանտերում պահվող մեր հայրենակիցների խնդիրը միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում պահելուն ուղղված գործողությունները:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«ԱՇՏԱՐԱԿԻ ՁՈՐ»-Ի ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Արագածոտնի մարզի «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի հնչած կրակոցներից: «Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ տեղեկություններ հասան այն մասին, որ Աշտարակի քաղաքապետի, նրա տեղակալի եւ այլ համայնքների ղեկավարների մասնակցությամբ միջադեպի գործով դատարանը որոշումներ է կայացրել:

Մասնավորապես, կրակոցների գործով, դատարանի որոշմամբ, կալանավորվել են Կարեն Պետրոսյանը եւ Արսեն Մանուկյանը, իսկ Աժ նախկին պատգամավոր Նաիրի Սահակյանի, Ուշքան համայնքի ղեկավար, 28-ամյա Գրիգոր Հարությունյանի եւ Ուշի համայնքի ղեկավար, 45-ամյա Մարտին Մարտիրոսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը:

Հոկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Արագածոտնի մարզի «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրից դեպի «Գալուստի ձոր» կոչվող հանգստյան գոտի ընկած հատվածում կրակոցներ են հնչել, ինչի հետեւանքով Աշտարակի քաղաքապետի՝ վիրավորում ստացած տեղակալին տարել էին հիվանդանոց: Ավելի ուշ shamshyan.com-ը գրեց, որ իրավապահները տեղի ունեցած միջադեպի գործով ձերբակալել են Ուշքան համայնքի ղեկավար, 28-ամյա Գրիգոր Հարությունյանին, «Ես եւ նա» ՍՊԸ տնօրեն, Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Սարգիս Սահակյանի եղբորը՝ 54-ամյա Նաիրիի Սահակյանին, Ուշի համայնքի ղեկավար, 45-ամյա Մարտին Մարտիրոսյանին եւ այլոց:

Նշված անձանց նկատմամբ Արագածոտնի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քր. օր.-ի տարբեր հոդվածներով, որպես կասկածյալների, մեղադրանքներ են առաջադրվել, եւ նրանք տեղափոխվել են ձերբակալվածների պահման տարբեր վայրեր:

Կոնկրետ ի՞նչ է կատարվել:

Եվ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ «Աշտարակի ձոր» ռեստորանային համալիրի սեփականատերը վերոնշյալ հատվածում հողի վրա աշխատանքներ է իրականացրել, եւ նշված հասցե է եկել Աշտարակի քաղաքապետ, ՔՊ թիմակից Թովմաս Շահվերդյանը ու սկսել վիճել նրանց հետ տարածքի հողի մասով, իր առարկությունները ներկայացրել, որից հետո հեռացել է: Նրա հեռանալուց հետո դեպքի վայր են գալիս ոստիկանները, քանի որ օպերատիվ տվյալներ են ստանում, որ նշված հասցեում «մարտաֆիլմ կինո» է լինելու, ու մինչ ոստիկանները հսկում են տարածքը, դեպքի վայր է գալիս մոտ 40-հոգանուց խումբ, ու սկսում են քարերով, բահերով դաժան ծեծի ենթարկել ռեստորանի տիրոջը: Անգամ ոստիկանների ներկայությունը չի սաստում խմբի անդամներին դադարեցնել «մարտաֆիլմը»: Այս իրավիճակը տեսնելով՝ ռեստորանի տիրոջ տղան հանում է ավտոմատը ու կրակում, որպեսզի սաստի ներկաներին, ու կրակոցներից վիրավորվում է Աշտարակի քաղաքապետի տեղակալը ու եւս մեկ անձ:

Իրավապահ համակարգում քննությունը շարունակվում է, եւ ենթադրություններ կան, որ միգուցե քաղաքապետ Թովմաս Շահվերդյանն է այս խմբին ուղարկել ռեստորանի տիրոջ դեմ. ինչեւէ, քննությունը կպարզի, իսկ մենք կհետեւենք քննության ընթացքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆՉԱԿԱՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ԱՄՈՒՍԻՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ 2023թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը 18:00-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Էրեբունու բաժնում 24-ամյա կինը հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 06:30-08:00-ն ընկած ժամանակահատվածում, ամուսինը ձեռքերով, ոտքերով, մկրատով հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր հատվածներին, հատուկ լուծույթով ցանկացել է հրկիզել իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Երիտասարդ կինը ճանաչվել է տուժող եւ հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ:

Քննությամբ ձեռք բերված տվյալներով՝ 2023թ. հոկտեմբերի 22-ին՝ գիշերը, երիտասարդ ընտանիքի բնակության վայր հանդիսացող Դավիթ Բեկ փողոցի ջրամբարին կից հողատարածքում գտնվող վագոն տնակում անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել ամուսինների միջեւ: Դրա ընթացքում ամուսինը՝ Երեւան քաղաքի 31-ամյա բնակիչը, ձեռքերով, ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել կնոջ մարմնի տարբեր մասերին՝ հնչեցնելով սպանության սպառնալիքներ՝ մկրատով հարվածներ հասցնելով կնոջ դեմքի, կրծքավանդակի, ձեռքերի եւ ոտքերի հատվածներին: Այնուհետեւ լուծիչ նյութ է լցրել կնոջ վրա եւ կրակայրիչով այրել: Կինը վերմակով ծածկվելու արդյունքում կրակը մարել է, որից անմիջապես հետո դուրս է եկել վագոն տնակից եւ դիմել փախուստի:

Նախաքննության ընթացքում տուժողի մասնակցությամբ կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում վագոն տնակի մոտ հայտնաբերվել եւ վերցվել է այրված հետքերով վերմակ եւ լուծիչ նյութի տարա: Վագոն տնակի պատուհանի եւ առաստաղի հատվածները եղել են մրոտված: Նշանակվել են դատաբժշկական, դատանյութագիտական փորձաքննություններ: Ոստիկանությանը տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ կնոջ ամուսնու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 9-րդ կետերով հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Կայացվել է դատարան ներկայացնելու նպատակով վերջինիս ձերբակալելու որոշում:

Իրականացված միջոցառումների արդյունքում ամուսինը հայտնաբերվել, ձերբակալվել, ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Քննիչի կողմից նրան ներկայացվել է մեղադրանք՝ վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար, եւ միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԿԱՐԵՎՈՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԲԱԺՆԻ ՊԵՏԻՆ

Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կադրերի բաժնի պետին մեղադրանք է առաջադրվել: Արմեն Գաբրիելյանը, լինելով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կադրերի բաժնի պետ, ՀՀ զինված ուժերում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական լիազորություններ, այսինքն՝ հանդիսանալով պաշտոնատար անձ, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, շահադիտական շարժառիթով կեղծ պաշտոնական փաստաթղթերի հիման վրա ՊԲ ֆինանսական դրամարկղից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու վերաբերյալ 2013թ. դեկտեմբերին նախնական համաձայնություն է ձեռք բերել ՊԲ ֆինանսական բաժնի հաշվարկային բաժանմունքի հաշվապահ Նելլի Հրանտի Խաչատրյանի եւ նույն բաժնի հաշվապահ-գանձապահ Գայանե Ալեքսանդրի Գրիգորյանի հետ:

Հանցավոր համաձայնությունն իրագործելու եւ հանցավոր վերջնարդյունքին հասնելու նպատակով կատարվել է դերաբաշխում, ինչի արդյունքում 2014-2018թթ. ընթացքում Արմեն Գաբրիելյանը, Նելլի Խաչատրյանը եւ Գայանե Գրիգորյանը խմբի կազմում ՊԲ ֆինանսական բաժնի դրամարկղից մեկ միասնական դիտավորությամբ, խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի, ընդհանուր՝ 124 միլիոն ՀՀ դրամ:

ԾԵԾԿՌՈՒՔ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՄԱՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էդգար Աֆյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա 2022 թվականի հունվարի 21-ին՝ ժամը 13:00 սահմաններում, գտնվելով Երեւան քաղաքի Մարշալ Բաղրամյան 40 հասցեում գտնվող «Հայաստանի Ամերիկյան համալսարան»-ի դիմաց, նույն համալսարանի ուսանող Խաչիկ Ենգիբարյանի հասցեին «ռեալիկ թողնելու» հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել վերջինիս հետ:

Դրանից հետո, հիշյալ չնչին առիթը որպես պատճառ օգտագործելով, նույն օրը՝ ժամը 16:30-ի սահմաններում, գործով դեռեւս չպարզված այլ անձանց հետ միասին դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, «Մազդա» մակնիշի, 96 AA 555 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երեւան քաղաքի Վերին Անտառային 138/3 հասցեի մոտ հարվածել է Խաչիկ Ենգիբարյանին պատկանող «Վազ 21214 Նիվա» մակնիշի, 68 XX 258 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջեւի ձախակողմյան հատվածին:

Արդեն այս միջադեպից հետո «Վազ 21214 Նիվա» մակնիշի ավտոմեքենան աջակողմյան հատվածով բախվել է նույն վայրում կայանված «Տոյոտա կոռոլա» մակնիշի ավտոմեքենային եւ արգելակել ընթացքը, որից հետո, իջնելով մեքենայից, գործով դեռեւս չպարզված անձանց հետ միասին խախտելով մարդկային համակեցության կանոնները եւ արհամարանք դրսեւորելով վերջինիս հանդեպ, անտեսելով հասարակական վայր հանդիսացող Երեւան քաղաքի Վերին Անտառային 138/3 հասցեի մոտ գտնվող, ինչպես նաեւ այդ հատվածով անցնող անձանց ներկայությունը, միմյանց գործողությունները լրացնելով, որպես զենք օգտագործվող ատրճանակով, ինչպես նաեւ ձեռքերով եւ ոտքերով հարվածներ է հասցրել Խաչիկ Ենգիբարյանին, ինչի հետեւանքով վերջինիս պատճառել է առողջության թեթեւ վնասվածքներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԴԵԲԵԴԸ՝ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ

Մի քանի տարի առաջ Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղի բնակիչներից մեկը Դեբեդ գետում իր որսացած ձուկը, որպես նվեր, հյուրասիրելու էր ուղարկել Ռուսաստանում բնակվող իր ընկերոջը: Նվեր ստացածը ձուկը տարել էր լաբորատոր փորձաքննության, որի արդյունքներով պարզվել էր, որ Դեբեդի ձկան մեջ շատ մեծ քանակ են կազմում ծանր մետաղները, ձուկն ուտելի չէ, ավելին՝ այն վտանգ է ներկայացնում ուտողի առողջության համար: «Կողբա գինիներ» գործարանի հիմնադիր, գինեգործ Գագիկ Աղաբաբյանը Տավուշի մարզի Կողբ գյուղում գործող իր գործարանի արտադրանքը արտահանելու նպատակով Դեբեդավան գյուղում աճեցված «Լալվարի» տեսակի խաղողը փորձաքննության է ուղարկել Իտալիա, որտեղ փորձաքննության ենթարկված խաղողի նմուշներում բազմաթիվ ծանր մետաղներ են հայտնաբերվել, դրանք քանի տասնյակ անգամ գերազանցել են թույլատրելի նորման: 2022 թվականից «Կողբա գինիներ»-ի հետ համագործակցող իտալական ընկերությունը հայտարարել է, որ եթե «Կողբա գինիներ»-ը շարունակի Դեբեդավանում աճեցված, Դեբեդի ջրով ոռոգված խաղող մթերել, իրենք այլեւս չեն համագործակցի այդ ընկերության հետ:

Գագիկ Աղաբաբյանը սրտի ցավով ստիպված է եղել հրաժարվել Դեբեդի հովտում աճեցված խաղողն ընդունելուց: Բագրատաշենի ենթաշրջանի այգեգործները հայտնում են, որ Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների պոչամբարներից աղտոտված ջուրը Դեբեդ գետ բաց են թողնում գիշերները, որպեսզի մոխրագույն գետը այգեգործների աչքին չզարնի: Դեբեդի հովտի շատ այգիներ գետի աղտոտված ջրով ոռոգելուց հետո չորացել են: Այս տարվա ապրիլին Լոռու մարզի Թեղուտ գյուղում կայացել են Թեղուտի հանքի արդյունահանման թույլտվության ժամկետը 13 տարով երկարաձգելու, հանքավայրի ընդլայնման նախագծի վերաբերյալ հանրային լսումներ: Ըստ այդ նախագծի՝ նախատեսվում է Թեղուտի հանքավայրը վերստին շահագործել, այդտեղ տարեկան արդյունահանել 7 միլիոն տոննա հանքաքար: Լոռու մարզում գործող մետաղական հանքերը եւ հանքաքարը վերամշակող ընկերությունները շուրջ 20 տարի սպառնալիք են Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքի՝ Դեբեդի հովտի պտղատու այգիների համար: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե Լոռու մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները երբ են գումարներ փոխանցելու Նոյեմբերյան համայնքի այն բնակավայրերին, որոնք տուժում են ծանր մետաղներով հագեցած Դեբեդի ջրով իրենց այգիները ոռոգելուց: Մարզպետը հայտնել, որ դա նախատեսված է 2024 թվականին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Օրեր առաջ անդրադարձ էինք կատարել Իջեւանի համայնքապետարանի գործունեությանը եւ նշել էինք, որ ամիսներ առաջ կնքվել է աղբամաններ եւ ծաղկամաններ ձեռք բերելու պայմանագիր, որոնք մինչ օրս չեն տեղադրվել համայնքում:

Հրապարակմանը հաջորդել էր Իջեւանի համայնքապետարանի պարզաբանումը: Վերջիններս հղում էին կատարել «Գնումների մասին» օրենքի տասնհինգերորդ հոդվածի վեցերորդ կետին եւ հայտնել, որ հիշյալ գույքը ձեռք չեն բերել ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով: Օրենքը թույլ է տալիս ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չկատարել պայմանագրով նախատեսված գնումը, իսկ պայմանագրի կնքումից վեց ամիս հետո այն մեխանիկորեն լուծվում է:

Այս ամենը տարօրինակ չէր լինի եւ հավելյալ հարցեր չէր առաջացնի, եթե մենք չստանայինք տեղեկատվություն, որ վերոհիշյալ գույքը, այնուամենայնիվ, ձեռք է բերվել:

Նոր մրցույթի մասին տեղեկատվություն գնումների օնլայն համակարգում չկա: Կարելի է ենթադրել, որ այն կատարվել է մեկ անձից եւ չի հրապարակվել: Պարզ է, որ խնդիրը ֆինանսը չի եղել, որովհետեւ գնումը կատարվել է: Հետեւաբար հարց է առաջանում՝ ի՞նչը կարող էր դառնալ մրցույթում հաղթած եւ ամենացածր գին առաջարկած ընկերությունից ձեռք չբերելու պատճառ, եթե ոչ կոռուպցիոն ռիսկերը եւ դրանք ցանկալի մատակարարից ձեռք բերելու ցանկությունը: Վերջապես ումի՞ց եւ ի՞նչ գնով են ձեռք բերվել այդ աղբամանները: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ կատարել ենք սեփական հետաքննությունը՝ ցանկալի մատակարարին որոնելով մրցույթին մասնակից չհաղթած ընկերությունների մեջ: Ըստ տրամաբանության՝ այդ ընկերությունը պետք է մասնակցած լիներ մրցույթին եւ իր կամքից անկախ պայմաններում, ավելի կոնկրետ՝ թանկ գին առաջարկած լինելու հանգամանքով պայմանավորված՝ չհաղթեր մրցույթում:

Հիշյալ մրցույթին մասնակից ընկերությունների մասին հասանելի ինֆորմացիան՝ էլհասցե, գործունեության հասցե, ՀՎՀՀ, հեռախոսահամար, հրապարակված է մրցութային փաստաթղթերում: Դրանցից միայն մեկը՝ «Հրայր Բաղդասարյան» ԱՁ-ն է, որ գրանցված է եւ իր գործունեությունն իրականացնում է իջեւանյան հասցեում: Ի սկզբանե կենտրոնանալով այս ԱՁ-ի վրա եւ ուսումնասիրելով նրան վերաբերող հրապարակային տվյալները՝ «Հրայր Բաղդասարյան» ԱՁ-ին կցված հեռախոսահամարով կոնտակտ հայտնաբերեցինք «Վայբեր» մեսենջերում, որին կցված է նաեւ լուսանկար: Այս լուսանկարով (կրառելով համացանցում լուսանկարներով որոնման գործիքներ) որոնում կատարելու արդյունքում հասկանալի դարձավ, որ լուսանկարի անձինք «Հրայր Բաղդասարյան» ԱՁ-ի սեփականատեր Հրայր Բաղդասարյանը եւ դեռեւս մեզ անհայտ ոմն Անահիտ Նազինյանն են, որոնք համատեղ լուսանկարներ ունեն նաեւ ֆեյսբուք սոցիալական ցանցում: Դատելով լուսանկարներից՝ նրանք ամուսիններ են: «Անահիտ Նազինյան» անունազգանունը հանդիպում է նաեւ Իջեւանի համայնքապետարանի գնման փաստաթղթերում: Իջեւանի համայնքապետարանի պաշտոնական կայքից էլ տեղեկանում ենք, որ նա համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետի տեղակալն է եւ հավանաբար համակարգում է հենց գնումների գործընթացը: Մեր կողմից ուսումնասիրված գնման փաստաթղթերում կա մի փաստաթուղթ, որտեղ Նազինյանը մրցութային հանձնաժողովի այլ անդամների հետ ստորագրությամբ փաստում է, որ մրցույթին մասնակից ընկերությունների հետ, որոնցից առնվազն մեկը պատկանում է իր ամուսնուն, չունի շահերի բախում:

Համադրելով ներկայացված փաստերը՝ դժվար չէ կռահել, թե ինչու գնման ընթացակարգով նախատեսված ապրանքները ձեռք չեն բերվել հաղթող ընկերությունից: Ի՞նչն է օրենքներին հղում անելով, սակայն ակնհայտորեն արհեստական խոչընդոտներ ստեղծելու միջոցով արդեն իսկ կնքված մատակարարման պայմանագիրը չեղարկման հասցնելու պատճառը: Խնդիրը ֆինանսը չէ, նախատեսված ապրանքները ձեռք են բերվել, պարզապես՝ ուրիշ մատակարարից: Վերջապես ո՞րը կարող է լինել հավանական մատակարարը, որից իրականացվել է գնումը, եւ ի՞նչ հնարավոր ռիսկեր կարող է պարունակել այս գործընթացը:

ԲԺԻՇԿՆԵՐ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՀԱՆՋ

Հայաստանում բուժաշխատողների համար սահմանվում է անհատական լիցենզիայի պահանջ, օրդինատուրայում սովորողները եւս լիցենզիա կստանան: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ ընդունելու համար ԱԺ-ում այն ներկայացրեց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

«Կառավարությունը հանձն է առել մասնագիտական անհատական լիցենզիայի ներդրում, վերագործարկում: Դրան էլ ուղղված է օրենսդրական այս փաթեթը»,- ասաց Ավանեսյանը:

Նախարարը հիշեցրեց, որ 2023թ.-ի հունվարից ուժի մեջ է մտել բժշկական մասնագիտական գործունեություն իրականացնելու համար հավաստագրման պարտադիր պահանջը, եւ 2023-ի հունվարի 1-ի դրությամբ արդեն 35 հազար բուժաշխատողներ անցել են ամբողջ գործընթացն ու ստացել հավաստագրեր:

«Հաջորդիվ Հայաստանում գործարկելով նաեւ լիցենզավորման պահանջը՝ կունենանք մասնագիտական հմտությունների, գիտելիքների անընդհատ թարմացում: Բացի այդ, հնարավորություն կունենանք բժշկական սխալների կամ էթիկական նորմերի խախտման պարագայում նաեւ որոշակի վերահսկողություն ունենալ մասնագիտական գործունեություն իրականացնող բուժաշխատողների նկատմամբ»,- ասաց Ավանեսյանը:

Օրենքն ուժի մեջ կմտնի ավագ բուժաշխատողների համար մինչեւ 2027 թվականի հունվարի 1-ը, իսկ կլինիկական օրդինատորների եւ ռեզիդենտների համար՝ մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը: Օրենքը նախատեսում է անհատական լիցենզիայի երկու տեսակ՝ ժամանակավոր եւ ամբողջական գործարկված անհատական լիցենզիա: Այս տարբերակումը հնարավորություն կտա կլինիկական օրդինատորներին բուժաշխատողի հսկողության տակ իրականացնել նաեւ սահմանափակ մասնագիտական գործունեություն, այսինքն՝ հմտանալ գիտելիքների մեջ:

Լիցենզավորման համակարգը, ըստ նախարարի, լրացնելու է արդեն գործող հավաստագրման համակարգը: Լիցենզավորումը լինելու է պարբերական: Ավանեսյանի խոսքով՝ այսպիսով բուժաշխատողները պետք է ժամանակի ընթացքում անընդհատ թարմացնեն իրենց գիտելիքներն ու հնարավորություն են ունենալու ապացուցելու էթիկական նորմերի մասով իրենց պատրաստվածությունը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 9-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցմամբ Հայաստանի խորհրդարանի քննարկմանն է ներկայացվել ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» նախագիծը, որով առաջարկվում է սահմանել, որ շահումով խաղերի մասնակցող յուրաքանչյուր անձ կարող է իր խաղային հաշիվը լիցքավորել միայն իրեն պատկանող բանկային կամ քարտային հաշվից: Այս մասին ասաց ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը՝ ներկայացնելով օրենքի նախագիծը:

«Առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում հանձնաժողովում տեղի է ունեցել հեղինակների եւ հանձնաժողովների անդամների մասնակցությամբ աշխատանքային քննարկում, որին մասնակցել են մի շարք գերատեսչությունների, մասնավորապես՝ ֆինանսների, էկոնոմիկայի, պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներ, Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ, մասնավոր սեկտորի եւ ոլորտում ներգրավված բոլոր ընկերությունների ղեկավար կազմի ներկայացուցիչներ: Քննարկումների արդյունքում որոշակի պայմանավորվածություններ ենք ձեռք բերել, եւ իմ կողմից առաջարկներ են եղել»,- ասաց Պապոյանը:

Պապոյանը ներկայացրեց իր կողմից ներկայացված երեք առաջարկները:

«Առաջին հերթին առաջարկել ենք հետաձգել օրենքի՝ ուժի մեջ մտնելու ժամկետը: Այն ուժի մեջ կմտնի 2024 թվականի ապրիլի 1-ից, որովհետեւ բանկային համակարգը եւ բիզնեսը պետք է ներդրումներ անեն դրա համար եւ տեխնիկական լուծումներ պետք է տան, որը ժամանակ է պահանջում:

Երկրորդ առաջարկով հստակ սահմանել ենք, որ խաղերի կազմակերպիչները հարցումներ են անում բանկերին, եւ բանկերը պարտավոր են տալ տվյալներ: Այսինքն՝ հստակեցրել ենք, թե ով եւ ինչ պատասխանատվություն ունի եւ ինչ իրավունք ունի այս գործընթացում:

Երրորդ առաջարկն այն է, որ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին այս օրենքի նախագիծը չի վերաբերի: Այն վերաբերելու է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին»,- ասաց Պապոյանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 24.08.2023թ. թիվ 117 (2783) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման» եւ 04.10.2023թ. թիվ 138 (2804) եւ 13.10.2023թ. թիվ 144 (2810) համարների 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման փոփոխությունների», տեղեկացնում ենք, որ «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Էլեկտրոն» ԲԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Շարուրի փողոց, 37/37 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդային փուլերը 30.10.2023թ.-ից շարունակվելու են 605000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ «Հրապարակային ծանուցման» մեջ նշված ընթացակարգով:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am կայք:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ՏՈԿՈՍՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼԻՍ

Հայաստանի Հանրապետությունում բնակարան գնելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստանալիս քաղաքացիների համար կարեւոր է հետեւյալ տեղեկատվությունը. հիփոթեքային վարկերի տոկոսները վերադարձվում են վճարված եկամտային հարկի գումարների չափով, բայց ոչ ավել, բան յուրաքանչյուր եռամսյակի համար 1.5 միլիոն դրամը /ՀՀ հարկային օրենսգիրք, 160-րդ հոդված/:

Տարիների ընթացքում նվազում է հիփոթեքային վարկերի վճարվող տոկոսների գումարների չափը, եւ ավելանում է մայր գումարների չափը:

Եթե ֆիզիկական անձը չի հանդիսանում կամ դադարում է հանդիսանալ վարձու աշխատող, ապա համապատասխանաբար չի օգտվում կամ դադարում է օգտվել եկամտային հարկի վերադարձման համակարգից:

Եկամտային հարկը չի վերադարձվում՝

- 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է, կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված շինությունների տարածագնահատման՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում:
- 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով՝ երկրորդ գոտում:
- 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով՝ երրորդ գոտում:

2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի եկամտահարկի վերադարձ չի գործելու Երեւանի տարածքում:

Նշված սահմանափակումները չեն կիրառվում մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ, ինչպես նաեւ մինչեւ վերոնշյալ փոփոխությունը ստացված հիփոթեքային վարկերի շրջանակում եկամտային հարկի գումարների հետագա վերադարձի նկատմամբ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից եկամտային հարկի վերադարձից օգտվելու իրավունքի հայտի հաստատումից հետո անհրաժեշտ է գրանցվել «Անհատական հաշիվների տեղեկատվական պորտալ»-ում եւ ուղարկել էլեկտրոնային դիմումն ընդհանուր սահմանված կարգով:

Վարկառուն, էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումից բացի, հարկային մարմին այլ փաստաթղթեր չի ներկայացնում, բացառությամբ ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում:

Տվյալ դեպքում մինչ էլեկտրոնային եղանակով դիմումն ուղարկելը թղթային եղանակով հարկային մարմին ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվարկված աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարների եւ դրանցից հաշվարկված ու ՀՀ պետբյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմնի կողմից սահմանված եւ գործատուի կողմից հաստատված տեղեկանք:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության նպատակով մինչ այժմ ՀՀ կառավարության կողմից բոլոր ծրագրերի համար ընդհանուր առմամբ 53 միլիարդ դրամ հատկացնելու որոշում է կայացված:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին Հումանիտար կենտրոնում կայացած ասուլիսի ընթացքում ասել է փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը՝ մանրամասնելով, որ 100 հազար դրամի չափով աջակցության շրջանակներում արդեն հատկացվել է 10 միլիարդ դրամ:

«Իհարկե, կարծում ենք, որ լրացուցիչ հատկացումները կվերջնականացվեն միջոցառումը փակելուց առաջ: Հնարավոր է, որ հանրագումարով այդ գումարը հասնի 11 միլիարդի: Կատարվել էին եւս մի քանի վճարումներ, հիմնականում՝ մարզպետարաններին, որոնք տեղերում ապահովում են մեր հայրենակիցներին սննդով եւ կեցության տարբեր պայմաններով: Այդ ուղղությամբ տարբեր միջոցառումների շրջանակներում ծախսել ենք մոտ 3 միլիարդ դրամ: Հատկացում ենք կատարել նաեւ 40 գումարած 10-հազարական դրամներին առնչվող միջոցառման նպատակով 2 մլրդ դրամ, իսկ եւս 3 մլրդ դրամը, ամենայն հավանականությամբ, կհատկացնենք այս շաբաթվա ընթացքում: Հաջորդ 5 ամիսների ընթացքում, բացի հոկտեմբերի համար նախատեսվածը, կեցության ծախսերի փոխհատուցման նպատակով կհատկացվի եւս 25 մլրդ դրամ»,- հավելել է փոխվարչապետը:

Նրա խոսքով՝ այսօր հայտարարված դրամական աջակցության նոր ծրագրի նախնական գնահատականը կազմում է մոտ 5 մլրդ դրամ, իսկ կամ երկու ամիսների հանրագումարով՝ 10 մլրդ դրամ:

ՎԱՏ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ

«Ռիա Նովոստի»-ի տեղեկություններով՝ ՌԴ Պետդուման որոշել է անորոշ ժամանակով հետաձգել Հայաստանի քաղաքացիների՝ ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեության համար վարորդական իրավունքի վկայականները ճանաչելու հարցի քննարկումը. այս մասին հայտնում է Պետդումայի մամուլի ծառայությունը:

«Պետդումայի պատգամավորները որոշեցին անորոշ ժամանակով հետաձգել ՀՀ քաղաքացիների՝ ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեություն իրականացնելիս ազգային վարորդական վկայականները ճանաչելու մասին օրինագծի քննարկումը: Առաջին ընթերցմամբ կառավարության նախաձեռնած օրինագիծն ընդունվել էր 2022թ.»,- հաղորդում է մամուլի ծառայությունը:

Ինչպես քննարկման ժամանակ նշեց Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը, այս օրինագծով առաջարկվում է Հայաստանին տալ լրացուցիչ նախապատվություններ՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի պատգամավորները, ղեկավարությունը եւ կառավարությունը որեւէ քայլ չեն ձեռնարկել ռուսաց լեզվի կարգավիճակի ամրապնդման ուղղությամբ: Այս հիմքով է որոշում ընդունվել Ռուսաստանի տարածքում այլ երկրների ազգային վարորդական վկայականների օգտագործումը թույլատրելու մասին:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓԱՌԱՏՈՆ

ԱՐԻԱՆԵՐ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՊԵՐԱՆԵՐԻՑ

Երեւանյան 15-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում աշխարհահռչակ տենոր Ռամոն Վարգասն առաջին անգամ հանդես կգա Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Համերգը, որը տեղի կունենա հոկտեմբերի 25-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում, կղեկավարի նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ երեկոյին կհնչեն սիրված արիաներ եւ նախերգանքներ համաշխարհային օպերաներից:

«Ես փորձելու եմ այստեղ հատուկ ծրագիր ներկայացնել եւ ընտրել եմ այն ստեղծագործությունները, որ կատարել եմ իմ ամբողջ կարիերայի ընթացքում, կլինեն նաեւ գործեր, որոնք կատարում եմ վերջին ամիսներին: Երկարատեւ դադարից հետո այս տարի կատարել եմ հատված «Կարմեն» օպերայից»,- հոկտեմբերի 24-ին լրագրողների հետ հանդիպմանն ասաց տենորը:

Նա առաջին անգամ է այցելում Հայաստան եւ չի հասցրել լավ ճանաչել հայկական մշակույթը, սակայն ունի հայ ընկերներ, որոնց հիանալի մարդիկ ու մասնագետներ է համարում: Ասում է՝ նրանցից է երգչուհի Կարինե Բաբաջանյանը:

«Ձեր երկրի նկատմամբ մեծ համակրանք ունեմ, ուստի ուրախ եմ, որ այստեղ ելույթ ունենալու առիթ է ստեղծվել: Ես հավանում եմ Հայաստանի բնակիչներին, եղանակը, սնունդն ու երաժշտությունը եւ մեծ բավականություն եմ ստանում այդ ամենից»,- նշեց Վարգասն ու անդրադարձավ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին՝ շեշտելով, որ այն հրաշալի է, բացառիկ է, իսկ Թոփչյանը մեծանուն դիրիժոր է:

Նրա խոսքով՝ մշակույթն ու արվեստը, մասնավորապես՝ երաժշտությունը, համախմբում են մարդկանց, ուստի հատկապես այս օրերին այն չափազանց անհրաժեշտ է:

Ռամոն Վարգասն աշխարհի առաջատար օպերային երգիչներից է: 1992 թվականին Մետրոպոլիտեն օպերայում Լուչանո Պավարոտիին «Լյուչիա դի Լամերմուր» օպերայում փոխարինելուց հետո նա դարձել է աշխարհի գլխավոր թատրոնների ցանկալի հյուրը: Դրան հաջորդել է նրան դեբյուտը Լա Սկալայում. այժմ Վարգասը մշտապես ելույթներ է ունենում Բուենոս Այրեսի Կոլոն թատրոնում, Լոնդոնի Թագավորական թատրոնում, Լա Սկալայում, Մետրոպոլիտենում, Մադրիդի Թագավորական թատրոնում, Փարիզի Օպերա Բաստիլում, Սան Ֆրանցիսկո օպերայում, Վիեննայի պետական օպերային թատրոնում, Արենա դի Վերոնայում եւ այլուր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՈՒԵՐԼԻՖՏԻՆԳԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԱՌԱՋԱՏԱՐ

Գավառում անցկացվել է ուժային եռամարտի (պաուերլիֆտինգ) IRON EURASIA-7 միջազգային մրցաշարը:

Մրցաշարին մասնակցել է 147 մարզիկ Հայաստանից, Հնդկաստանից, Իրանի Իսլամական Հանրապետությունից, Վրաստանից. մրցաշարն առցանց եղանակով անցկացվել է նաեւ Էստոնիայի, Լիտվայի, Ուկրաինայի եւ Անգլիայի մարզիկների համար:

Հայաստանը թիմային հաշվարկով զբաղեցրել է առաջին հորիզոնականը՝ վաստակելով 979 միավոր: Երկրորդ տեղում Իրանի թիմն է՝ 421 միավորով: Լավագույն եռյակը եզրափակել է Վրաստանի թիմը՝ 173 միավորով:

Հայ մարզիկներն աշխարհի ռեկորդով բացարձակ հաղթողներ են դարձել «Ձգում» վարժությունում: 302.5 կգ արդյունքով աշխարհի ռեկորդ է սահմանել եւ ոսկե մեդալ նվաճել Արտյոմ Խուգոյանը՝ 179.600 միավորով: Երկրորդ տեղում Սերոբ Սիմոնյանն է (աշխարհի ռեկորդ՝ 270 կգ, 164.320 միավոր), իսկ լավագույն եռյակը եզրափակել է Լաբեր Գրիգորյանը (աշխարհի ռեկորդ՝ 265 կգ, 156.300 միավոր):

«Բիցեպս» վարժությունում եւս հայ մարզիկները ցույց են տվել լավագույն արդյունք: Հաղթող է ճանաչվել 110 կգ քաշային Արտյոմ Խուգոյանը՝ 75 կգ արդյունքով նաեւ աշխարհի ռեկորդ սահմանելով: Երկրորդ տեղը զբաղեցրել եւ արծաթե մեդալին արժանացել է Արթուր Ավետիսյանը, որը եւս աշխարհի ռեկորդ է սահմանել (70 կգ): Բրոնզե մեդալակիր է դարձել Կարեն Պետրոսյանը:

Երկամարտ («Պառկած սեղմում + ձգում») վարժությունում ոսկե մեդալակիր է դարձել Արտյոմ Խուգոյանը: Նա նաեւ աշխարհի ռեկորդ է սահմանել՝ 497.5 կգ արդյունքով: Երկրորդ տեղը զբաղեցրել է Վրաստանի ներկայացուցիչ Թեյմուրազ Աբսարիձեն, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Կառլեն Անտոնյանը: Վերջինս նաեւ աշխարհի ռեկորդ է սահմանել՝ 377.5 կգ արդյունքով:

«Պառկած սեղմում» վարժությունում առաջին տեղը զբաղեցրել է Արտյոմ Սոլոյանը՝ նաեւ աշխարհի ռեկորդ սահմանելով 195 կգ արդյունքով: Արծաթե մեդալակիր է դարձել վրացի Լեւան Գորգոձեն, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Հայաստանի ներկայացուցիչ, պարամարզիկ Հարություն Մխիթարյանը: Հայ մարզիկը նաեւ աշխարհի ռեկորդ է սահմանել 145 կգ արդյունքով:

Նմանօրինակ մրցաշար աշխարհում կազմակերպվել է առաջին անգամ:

ՍՊՈՐՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայում կկայանան խմբային փուլի երրորդ տուրի հանդիպումները:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ A խմբում «Գալաթասարայ»-ը տանը կընդունի «Բավարիա»-ին, իսկ «Մանչեսթեր Յունայթեդ»-ը կխաղա «Կոպենհագեն»-ի հետ:

B խմբում «Սեւիլիա»-ի մրցակիցը կլինի «Արսենալ»-ը, «Լանս»-ը կխաղա «ՊՍՎ»-ի հետ:

C խմբում «Ռեալ»-ը կհյուրընկալվի «Բրագա»-ին, իսկ «Նապոլի»-ն՝ «Ունիոն Բեռլին»-ին:

Եվ D խմբում «Ինտեր»-ի մրցակիցը «Զալցբուրգ»-ն է (խաղի մեկնարկը՝ ժամը 20:45-ին), իսկ «Բենֆիկա»-ն ուժերը կչափի «Ռեալ Սոսիեդադ»-ի հետ:

Հանդիպումների հիմնական մասը կմեկնարկի Երեւանի ժամանակով 23:00-ին:

«Ամեն ինչ նույնն է, մեզ համար կարեւոր է Չեմպիոնների լիգայի յուրաքանչյուր հանդիպում: Թեպետ այդքան էլ հաջող հանդես չեկանք «Ռեալ Սոսիեդադ»-ի դեմ խմբային փուլում, բայց լավ խաղ ստացվեց «Բենֆիկա»-ի դեմ: Ցանկություն ունենք նույն կերպ շարունակել»,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է Մխիթարյանը: Հայ կիսապաշտպանի խոսքով՝ թիմի համար այժմ առաջնայինը ոչ թե մրցաշարային աղյուսակին նայելն է, այլ երկար ճանապարհին անցնելը:

«Անելու ենք մեր ուժերի ներածին չափով ամեն ինչ Չեմպիոնների լիգայի առաջիկա խաղում հաղթելու համար»,- ասել է Մխիթարյանը:

«ՏՈՏԵՆՀԵՄ»-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Լոնդոնի «Տոտենհեմը» Անգլիայի պրեմիեր լիգայի առաջին 9 խաղերում ցուցադրել է լավագույն արդյունքը 1960 թվականից ի վեր: Ավստրալացի Անգելոս Պոստեկոգլուի գլխավորած թիմը 23 միավորով (7 հաղթանակ, 2 ոչ-ռքի) գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 63 տարի առաջ «Տոտենհեմն» Անգլիայի առաջնության առաջին 9 խաղերում տարել է նույնքան հաղթանակ եւ հետագայում դարձել չեմպիոն. հաղորդում է Optan: Պրեմիեր լիգայի 9-րդ տուրում «Տոտենհեմը» 2:0 հաշվով հաղթել է «Ֆուլհեմին»:

Անգելոս Պոստեկոգլուն այս ամռանն է գլխավորել «Տոտենհեմը»:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ

«Միլանի» պորտուգալացի հարձակվող Ռաֆայել Լեաուն ստացել է Իտալիայի առաջնության սեպտեմբերի լավագույն ֆուտբոլիստի մրցանակը:

Անցած ամիս 24-ամյա ֆուտբոլիստը 5 խաղում խփել է 3 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

Սեպտեմբերին «Միլանը» 2:1 հաշվով հաղթել էր «Ռոմային», 1:5 հաշվով՝ պարտվել «Ինտերին», հաղթել էր նաեւ «Վերոնային» (1:0), «Կալյարիին» (3:1) եւ «Լացիոյին» (2:0):

9 տուրից հետո «Միլանը» 21 միավորով երկրորդն է: Առաջատար «Ինտերն» ունի 22 միավոր:

● *Հոկտեմբերի 25-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Բանալի երկուսի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որքան ժամանակ է վարկային տեղեկատվությունը պահպանվում տվյալների բազայում:

Արտակ Հայրապետյան (47 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է (ըստ «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» Ձեր (վարկառուի) վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է Ձեր կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՐՑ. «Էվոկա»-ում պարտատոմսերի գրավով վարկ վերցնել կարո՞ղ եմ:

Լիլիթ Միքայելյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, կարող եք:

Ինչպես եւ ավանդի դեպքում, պարտատոմսերի դեպքում եւս կարելի է պարտատոմսերի գրավով վերցնել կարճաժամկետ վարկ:

«Էվոկա բանկ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկը տրամադրվում է առավելագույնը պարտատոմսի մարման ժամկետով, պարտատոմսի արժեկտրոնային տոկոսադրույք՝ +2%, այսինքն՝ ՀՀ դրամով՝ 12%, ԱՄՆ դոլարով՝ 7.5% տարեկան անվանական տոկոսադրույքով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի հեծանվասպորտի հավաքականը հոկտեմբերի 21-22-ը մասնակցել է Վրաստանի բաց առաջնությանը եւ 2 ոսկե, 2 արծաթե ու 1 բրոնզե մեդալ նվաճել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 4 +10 + 16
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 7 + 9 +16 + 18
Գեղարքունիք	+ 1 + 5 +10 + 14
Լոռի	+ 4 + 7 +16 + 19
Տավուշ	+ 8 + 10 +19 + 23
Արագածոտնի լեռներ	0 + 4 +10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 +18 + 21

Արարատ	+ 9 + 11 +21 + 23
Արմավիր	+ 8 + 11 +20 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 3 +10 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 24
Սյունիքի հովիտներ	+10 + 13 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 18
ԼՂՀ	+ 9 + 13 +21 + 24
Երեւան	+ 9 + 12 +20 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*